Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-442[1]-25.11.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «, ոստիկանության» բառը հանել.
2. 2-րդ մասի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը.».

2. 17-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.
3. լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետ.

«19) Ոստիկանությունը»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի ուժով Միգրացիոն ծառայությունը համարվում է անվանափոխված:

3. Մինչև Ներքին գործերի նախարարության կանոնադրության հաստատումը կառավարությունը որոշում է Ներքին գործերի նախարարության ենթակա մարմինների ենթակայության հարցը:

4. Ներքին գործերի նախարարի լիազորություններն ստանձնելու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը Ոստիկանապետը Ներքին գործերի նախարարին է ներկայացնում Ոստիկանության ենթակայության փոփոխությամբ պայմանավորված Ոստիկանության կանոնադրության նախագիծ, այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ, ինչպես նաև իր կողմից ընդունվող կամ փոփոխություններ ենթադրող իրավական ակտերի ցանկը:

5. Ներքին գործերի նախարարի լիազորություններն ստանձնելու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը Փրկարար ծառայության տնօրենը Ներքին գործերի նախարարի հաստատմանն է ներկայացնում Փրկարար ծառայության ենթակայութան փոփոխությամբ պայմանավորված Փրկարար ծառայության կանոնադրության նախագիծ, միաժամանակ Արտակարգ իրավիճակների նախարարին է ներկայացնում կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու առաջարկություն: Կանոնադրության հետ միաժամանակ Ներքին գործերի նախարարին է ներկայացնում ենթակայության փոփոխությամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ, ինչպես նաև իր կողմից ընդունվող կամ փոփոխություններ ենթադրող իրավական ակտերի ցանկը:

6. Ներքին գործերի նախարարի լիազորություններն ստանձնելու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը Ներքին գործերի նախարարի հաստատմանն է ներկայացնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անվանափոխությամբ և ենթակայութան փոփոխությամբ պայմանավորված Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրության նախագիծ, միաժամանակ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին է ներկայացնում կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու առաջարկություն: Կանոնադրության հետ միաժամանակ Ներքին գործերի նախարարին է ներկայացնում ենթակայության փոփոխությամբ և անվանափոխությամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

առաջարկություններ, ինչպես նաև իր կողմից ընդունվող կամ փոփոխություններ ենթադրող իրավական ակտերի ցանկը:

7. Ոստիկանության, Փրկարար ծառայության, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունները հաստատվում են Ներքին գործերի նախարարության կանոնադրության հաստատելու օրը:

8. Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը օրենքի ուժով գործում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կազմում որպես Անձնագրերի և վիզաների վարչություն՝ աշխատողների նույն թվաքանակով և կառուցվածքով:

9. Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից Միգրացիոն ծառայության քաղաքացիական ծառայողները և աշխատողները (քաղաքացիական աշխատանք կատարողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ) շարունակում են պաշտոնավարել և իրականացնել Միգրացիոն ծառայությանը վերապահված գործառույթները մինչև հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստման արդյունքներով քաղաքացիական ծառայողների՝ պաշտոնների նշանակվելը: Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստումը անցած Միգրացիոն ծառայության քաղաքացիական ծառայողները նշանակվում են Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում:

10. Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից Անձնագրերի և վիզաների վարչության ծառայողները (ոստիկանության ծառայողներ և քաղաքացիական ծառայողներ) և աշխատողները (քաղաքացիական աշխատանք կատարողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ) շարունակում են պաշտոնավարել և իրականացնել համապատասխան օրենքով սահմանված գործառույթները մինչև հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանած կարգով վերապատրաստման արդյունքներով ծառայողների՝ պաշտոններինշանակվելը: Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստումը անցած

Անձնագրերի և վիզաների վարչության ծառայողները (ոստիկանության ծառայողներ և քաղաքացիական ծառայողներ) նշանակվում են Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ համարվելով քաղաքացիական ծառայողներ:

11. Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պաշտոններում նշանակումները կատարվում են վերապատրաստման դասընթացների ամբողջական ավարտից հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում: Վերապատրաստումը չանցած ծառայողները ազատվում են զբաղեցրած պաշտոններից համապատասխան օրենքներով սահմանված կարգով:

12. Վերապատրաստումը անցկացվում է Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումը ուժի մեջ մտնելուց հետո՝ տասն ամսվա ընթացքում: Վերապատրաստման կարգը սահմանվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 40 օրվա ընթացքում:

13. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Ներքին գործերի նախարարը 20 աշխատանքային օրվա ընթացքում հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի հաստատմանն է ներկայացնում վերապատրաստման կարգը:

14. Վերապատրաստման վերջին դասընթացի անցկացման ամսվա նախորդող երրորդ ամսվա մեկին Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը Ներքին գործերի նախարարի հաստատմանն է ներկայացնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության նոր կանոնադրությունը՝ համապատասխան կառուցվածքային փոփոխություններով:

15. Ոստիկանության ծառայողը, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողը (եթե նրա վրա տարածվում է հավասարեցման պահանջը), ով վերապատրաստման արդյունքով կզբաղեցնի Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոն, նշանակվելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ: Պետական կենսաթոշակ ստանալու պահից տվյալ քաղաքացիական ծառայողի աշխատավարձի

հաշվարկը իրականացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով: Նախկինում հաշվարկվող հավելումները և լրավճարները այլևս չեն հաշվարկվում:

16. Ոստիկանության ծառայողի, ով վերապատրաստման արդյունքով կզբաղեցնի Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոն, հիմնական աշխատավարձը կորոշվի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով: Ոստիկանության քաղաքացիական ծառայողի, ով վերապատրաստման արդյունքով կզբաղեցնի Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոն, հիմնական աշխատավարձը կորոշվի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված կարգով:

17. Սույն հոդվածով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, և պահպանվում են արձակուրդի իրավունքի իրացման համար հաշվարկվող աշխատանքային օրերը: Ոստիկանության քաղաքացիական ծառայողների դեպքում կիսամյակային հաշվետվությունը հավասարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N1510-Ն որոշմամբ նախատեսված կատարողականի կիսամյակային գնահատման արդյունքին՝ դրական և բացասական գնահատականների հետևանքներով:

18. Ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ծառայողների, որոնք սույն հոդվածի 10-րդ մասի համաձայն շարունակում են պաշտոնավարել, կադրային գործը շարունակում է վարվել Ոստիկանության կողմից մինչև Ներքին գործերի նախարարի կողմից հաստատված կարգին համապատասխան կփոխանցվեն ներքին գործերի նախարարությանը:

19. Ոստիկանության այն համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման, որի ծառայողները սույն հոդվածի 10-րդ մասի համաձայն շարունակում են պաշտոնավարել, պահպանման ծախսերը, այդ թվում՝ վարձատրության, իրականացվում

են Ոստիկանության կողմից մինչև Կառավարության համապատասխան որոշումը ուժի մեջ մտնելը:

20. Փրկարար ծառայության ենթակայության փոփոխությունից հետո Փրկարար ծառայության պահպանման ծախսերը, այդ թվում՝ վարձատրության, իրականացվում են Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մինչև Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելը:

21. Սույն օրենքի ընդունումից բխող այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: